

MESROVB JACOB SETH, Armenians in India from the earliest times to the present day. A work of original research. Calcutta 1937, 8°, p. XX + 630. Pr. 15 s.

«Գաղափարականի համար 45 տարի շարունակ պատմութեան ու հնարասութեան փշոտ ասպարէզին վրայ անդադար աշխատեցանք: Օրուան տապը կրեցինք ու աներկիւղ վաստակեցանք ամայի օձաբնակ գերեզմանոցներու մէջ. այսպէս ըսենք՝ բացինք հոն հին դամբանները, հաւաքեցինք ոսկրները, կեանք ներշնչեցինք անոնց ու խօսիլ տուինք: 45 տարի թափառեցանք Լահորէն Մադրաս, Սուրաթէն Դակկա, հիւսիսէն հարաւ, արեւելքէն արեւմուտք Հնդկաստանի այս հսկայ երկրին մէջ:»

Այս խօսքերով կը բանայ հեղինակը գրքիս յառաջաբանը. կատարուած աշխատանքի համետ, գոհունակ գիտակցութիւնն է, որ կը խօսի այս տողերէն: Ընթերցողը շուտով պիտի համոզուի թէ 45 տարիներու քննութեան հսկայ արդիւնքն է ամբարուած այս հաստափոր հատորիս մէջ. ան հաճոյքով պիտի պտտի հեղինակին հետ քաղաքէ քաղաք՝ յայտնաբերելու համար մեր նախնիներու հետքերը ոսկոյ այս երկրին մէջ:

Մ. Յ. Սէթեանցի ներկայ հատորը յատկապէս երկրորդ տպագրութիւնն է համանուն երկին, որ 1895ին լոյս տեսած էր. բայց անոր քառապատկուած ծաւալն ու բովանդակութիւնը արդարացի կ'ընեն զայն ինքնուրոյն գործ նկատել: Առաջինը իննսնական թուականներուն ծնունդ առած էր, երբ եւրոպական երկնող քաղաքականութիւնը հայասնապատ որոշումներ տալու համար՝ Հայոց պատմական ու մշակութային ազդակներուն պէտք ունէր: Սէթեանց ազնիւ ազդասէրի պարտաճանաչութեամբ հնդկական «Խեղդիչ» դիշերներ կը լուսնցնէր՝ Հնդկաստան պատմութիւնը յորինելու եւ անոնց Անգլիոյ մատուցած ծառայութիւնը ապացուցանելու նպատակով: Կարճ ժամանակէն կը հրատարակուէր գործս ձօնուած Gladstoneի: Անգլիոյ երբեմնի վարչապետը շնորհակալութեան նամակով կը յայտնէր զայրոյթը Եւրոպայի կարկամած արդարափրութեան ու բարեայակամութեան դէմ, եւ սիփփանք կը փնտռէր հայ նահատակներու հերոսութեան մէջ (Armenians in India, էջ 183): Սէթեանց

յուսախար էր. այս հատորիս մէջ դեռ կ'արձագանգէ անոր ազգային յոյսերու փշուամբ: Բայց այդ առաջին առիթն իրեն դրոյլու մը եղած էր Հնդկաստան անցեալով հետաքրքրուելու. այնուհետեւ ան կ'ըլլայ իրեն սիրական գրադմուտքը. տարուէ տարի յօդուածներ ու պրակներ լոյս կը տեսնեն՝ միշտ Հնդկաստանը ընդարձակ պատմութեան մը հեռապատկերով. եւ այդ այսօր կ'իրականանայ:

Բազմապիսի են այն Հայերը, որոնց կը ծանօթանանք մատենիս միջոցաւ. ըլլայ ան Մոդուլի արքունիքին մէջ աւաղանիներէն մին՝ ինչպէս միրզա Zul Qarnain, կամ Ազբարի կին՝ հայ թագուհի մը, կամ օտար հնչող արքունի հայ թարգմանը Domingo, կամ պարսիկ լեզուով հայ բանաստեղծ մը՝ Սարմատ, որուն կրակոտ խօսքերն ու պատկերները իրեն համբաւ շինած են, կամ թնդանօթ ձուլող հայը՝ Շահ Նազար խան, դնդապետներ, կառավարիչներ, եւ մանաւանդ վաճառականներ ու բարերարներ: Սէթեանց նուիրականութեան երկիւղով կը քաղէ անոնց մասին տեղեկութիւնները հայ եւ օտար ազբիւրներէ. անոնց կարգին գլխաւոր տեղ կը բռնեն Թաղեաղեանցի ու Հոստընի գրութիւնները. ժամանակակից պարսիկ մատենագրութիւնն եւս մեծ չափով նիւթ կը մատակարարէ. բայց ամէնէն լայն ծաւալով օգտուած է շիրմաքարերէն եւ այլ հայագործ յիշատակարաններէ: Անտարակոյս կարելի է միշտ լրացուցիչ բեկորներ գտնել կրօնաւորական առաքելութիւններու տեղեկութեանց մէջ, ինչպէս են Պոմպէի պորտուգալցի Ալգոստինեան հայրերու գործերը, եւ կամ ուղեգիրներու զեկոյցներուն մէջ: Բայց Սէթեանցի այս գործով միայն պիտի լրանան անոնք:

Մ. Յ. Սէթեանց անկեղծօրէն կը շնորհակարանք. ան կը դիտէր Հնդկաստանի եւ առ հասարակ հայ դադութային պատմութեան փոքր նպատ մը բերել, եւ կ'ընծայէ ընդարձակ երկասիրութիւն մը, մեծ արժէքով: Աշխատանքի աշխուժով միշտ լի՝ նա կը խոստանայ հրատարակել հնդկաստան կարեւոր ննջեցեալներու պատկերն ու դամբանները, Armenian Obituary of India: Մենք կը մագթենք որ այդ զեղեցիկ գաղափարն եւս շուտով իրագործուի:

Հ. Պ. ԷՍԱՊԱԼԵԱՆ

Վ Ի Ե Ն Ն Ա, Մ Ի Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

